ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2015 թվականի N 167 -Ա

<<ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՄԱՆՈՐ>> ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի մասին>> օրենքի՝ <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. <<Սյունիքյան Ամանոր>> միջոցառում կազմակերպելու նպատակով 2.632.0 հազ. (երկու միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) դրամ տրամադրել Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել <<Սյունիքյան Ամանոր>> միջոցառման կազմակերպման և անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, կանոնադրությունը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն N 1 - N 5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 9
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ դեկտեմբերի 9 -ի
N 167 - Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

<<Սյունիքյան Ամանոր>> միջոցառման

1. Ս. Խաչատրյան	ՀՀ Սյունիքի մարզպետ, / նախագահ/
2. Վ. Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /տեղակալ/
3. Հ. Հովհաննիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
4. Հ. Ալեքսանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ս. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ
5. Ա. Հայրապետյան	Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
6. Վ.Ադունց	Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Ա. Հովհաննիսյան	Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Մ. Զաքարյան	Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Վ. Գևորգյան	Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Ա. Հակոբջանյան	Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Վ. Արզումանյան	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. դեկտեմբերի 9-ի
N 167 -Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

1. Խթանել և ամրապնդել ազգային ծեսերի ու ծիսակատարությունների զարգացումն ու տարածումը, հասարակությանը ներկայացնել տարվա ընթացքում մարզում ի հայտ եկած լավագույն երաժշտական, պարային խմբերին, անհատ կատարողներին ու ստեղծագործողներին, մարզի մշակութային գործիչներին:
2. Միջոցառումը ներառում է հետևյալ բնագավառները՝
   - կերպարվեստ
   - երաժշտարվեստ /խմբեր և անհատ կատարողներ/
   - պարարվեստ /ժողովրդական և ժամանակակից/
   - բեմարվեստ /հումոր, նմանակումներ, ասմունք և այլն/
   - թատերական ներկայացում
3. Պսակադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:
4. ՀՀ Սյունիքի մարզի վաստակաշատ քաղաքացիների մեծարման ցերեկույթներ:
5. Ձմեռ պապի և Ձյունանուշի այց՝ 2016թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին:
6. Ձմեռ պապի և Ձյունանուշի այց՝ մարզում սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներ:
7. Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը Կապանի տարեցների կենտրոն:
8. Նկարիչների ցուցահանդես <<Սյունյաց ձմեռ>> թեմայով:
9. Միջոցառման լավագույն և ակտիվ մասնակիցների պարգևատրում պատվոգրերով և հուշանվերներով:
10. Ուրախ տոնակատարություն և հյուրասիրություն սյունիքյան ավանդական ուտեստներով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. դեկտեմբերի 9-ի
N 167- Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

1. Նպատակը
   Սյունիքի մարզի համայնքների միջև սերտ կապերի ամրապնդում, Ամանորը և Սուրբ ծնունդը որպես ազգային ծես ու ծիսակատարություն գաղափարի վերլուծություն ու յուրովի ներկայացում, տարվա շնորհալի և տաղանդաշատ կատարողների, մշակութային և ստեղծագործական աշխատանքների ներկայացում, մարզում մշակութային կյանքի աշխուժացում, ազատ ժամանցի կազմակերպում, մշակութային կյանքում մատաղ սերնդի դերի բարձրացում:
2. Միջոցառման պատվիրատուն և կատարողը.
   «Սյունիքյան Ամանոր» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:
   Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմկոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:
3. Միջոցառման մասնակիցները
   «Սյունիքյան Ամանոր» միջոցառմանը մասնակցում են մարզի տարածաշրջաններից հրավիրված երաժշտական և պարային խմբեր, անհատ կատարողներ, երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ և մշակութային այլ գործիչներ:
4. Միջոցառման ժամկետը և վայրը
   Միջոցառումը անց է կացվելու ս/թ դեկտեմբեր և 2016թ.հունվար ամիսներին՝ մարզի տարածաշրջաններում:
5. Միջոցառման ընթացքը
   «Սյունիքյան Ամանոր» միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի, հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:
   Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ;
6. Միջոցառման ծախսերը
   Տոնակատարության անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, նվերների, հուշանվերների և պարգևատրման, սննդի և սպասարկող անձնակազմի/ հոգում են միջոցառման կազմակերպիչները՝ համաձայն հաստատված նախահաշվի:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. դեկտեմբերի 9-ի
N 167- Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4240.00	270.0
2	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	265.0
3	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216.22	60.0
4	Գովազդ	4234.21	30.0
5	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	975.0
6	Նվերներ	4237.12	610.0
7	Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	4239.11	352.0
8	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261.11	70.0
	Ընդամենը		2.632.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. դեկտեմբերի 9 -ի
N 167-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Սյունիքյան Ամանոր » միջոցառման

h/h	Ժամանակը	Միջոցառման անվանումը	Վայրը
1	25-31.12.2015թ	Ցուցահանդես՝ <<Սյունյաց Ձմեռ>>, երիտասարդ նկարիչների աչքերով	Մարզի քաղաքային համայնքներում
2	26.12.2015թ	ՀՀ Սյունիքի մարզի վաստակաշատ քացաքացիների մեծարման ցերեկույթ	ՀՀ Սյունիքի մարզի գյուղական համայնքներ
3	27.12.2015թ	Պսակադրություն Արցախյան պատերազմում զոհվածների շիրիմներին, Ամանորի տոնական հանդիսություն և համերգ	Ք.Կապան,Գորիս,Սիսիան, Մեղրի, Քաջարան
4	29.12.2015թ	Ամանորի տոնակատարություն և հյուրասիրություն սյունիքյան ավանդական ուտեստներով	Ք.Կապան
5	31.12.2015թ.	Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներ	ք. Կապան Մարզի տարածաշրջաններ
6	2.01.2016թ.	Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը 2016թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	Մարզի տարածաշրջաններ
7	3.01.2016թ	Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը Կապանի տարեցների կենտրոն	Ք.Կապան
8	06.01.2016թ	Սուրբ պատարաք, մոմավառություն, տոնախմբություն	Ք.Կապան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան